

Խ. Մամուկյան

Crassula Arborescens-ի ԲԱԶՄԱՑՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

Crassula arborescens-ը շերմատնային հյուսթալի բույս է, մասի տե-
 րևներով, ցողունների ծայրերին փոքր և սպիտակ ծաղիկների հովանոցաձև
 ծաղկաբույլերով:

Նրա ծաղկումը սկսում է դեկտեմբեր, հունվար ամիսներին և տևում է
 մինչև մարտ ամիսը:

Ինչպես հայտնի է Crassula arborescens-ը բազմամյա է սերմերով և
 ցողունային կտրոններով:

Ըստ Hagemann-ի (1932 թ.) այս ցեղի մի այլ տեսակը Crassula
 multicava-ն հնարավոր է բազմացնել նաև տերևային կտրոններով, իսկ
 Crassula arborescens-ի վերաբերյալ նշում չկա: Մեզ հետաքրքրում էր
 Crassula arborescens-ը բազմացնել նաև տերևային կտրոններով: Փորձը
 դրվել է Բուսաբանական այգու կուլիցիոն շերմատանը 1947 թ. մար-
 տի 24-ին:

Արևի ուժեղ ճառագայթներից բույսերը պաշտպանելու համար, շեր-
 մատան ապակիները սպիտակացվել են, որի հետևանքով ամբողջ փորձի
 ընթացքում մարտ ամսից մինչև սեպտեմբեր ամիսը շերմությունը տատան-
 վել է 16°—22°-ի սահմաններում:

Փորձարկվել են 60 տերևային կտրոններ, որոնք սուր դանակով կրտ-
 բելուց հետո տնկվել են մաքուր լվացած խոնավ ավաղի մեջ, մեկ սանտի-
 մետր խորությամբ:

Սրմատակալման ընթացքը պարզելու համար ապրիլի 24-ին կատար-
 վել է առաջին դիտողությունը: Նրկորդ դիտողությունը կատարվել է մա-
 յիսի 24-ին: Առաջին և երկրորդ դիտողությունների արդյունքները ներկա-
 յացված են 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

	Դիտողությունները կատարվել են			
	24 IV		24 V	
Սրմատակալված կտրոնները	20 հատ	88,8%	45 հատ	75,0%
Նեխած կտրոնները	4 հատ	6,8%	10 հատ	16,7%

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, Crassula arborescens-ի
 տերևային կտրոնների 75 տոկոսը արմատակալել է:

Արմատակալումից հետո տերևների հիմքում երևացել են փոքրիկ սպիտակ դեղնավուն բողբոջներ:

Երրորդ դիտողությունը կատարվել է սեպտեմբերի 29-ին, որի արդյունքները բերված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Արմատակալած կարոճներ, որոնցից՝	50 հատ	83,3%
Կանաչ ցողուններով՝	21 հատ	35,0%
Նոր ծլած ցողուններով՝ հողի տակ	14 հատ	23,3%
Բողբոջներով՝ կարոճի հիմքում	10 հատ	16,7%
Միայն արմատակալած	5 հատ	8,3%
Նեխած կարոճներ	10 հատ	16,7%

Պետք է նկատել, որ արմատակալած տերևային կարոճները սկզբում դանդաղ են դուրս գալիս հողի տակից, սակայն հետագայում սկսում են աճել ավելի արագ:

Մեր կողմից դրված փորձերի 1 և 2 աղյուսակներում բերված տվյալների հիման վրա կարելի է գալ այն եզրակացություն, որ *Crassula arborescens*-ը մեծ հաջողությամբ կարելի է բազմացնել նաև տերևային կարոճներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Hageman August. 1932. Untersuchungen an Blattstecklingen. Gbrtenwissenschaftl. Band 6. Berlin.

Х. Санагян

О новом способе размножения *Crassula arborescens*.

(Резюме)

Нами был испробован метод размножения *Crassula arborescens* листовыми черенками, каковой метод в литературе не описан. Наш метод заключается в том, что от растения *Crassula arborescens* срезаются острым ножом листья и сажаются на глубину 1 см. во влажный песок. Опыт был поставлен в коллекционной оранжерее Ботанического Сада АН Арм. ССР 24 марта 1947 г. при температуре, колеблющейся от 16 до 22°. Опыт показал, что изолированные листья

Crassula arborescens хорошо укореняются, после чего у основания листа появляется от одной до нескольких почек, впоследствии прорастающих в побеги. Эти побеги начинают интенсивно развиваться после того, как вершины их достигнут поверхности земли, в которую пересаживались из песка листья после их укоренения. Таким путем из каждого листа возникает по нескольку побегов.

Учет, произведенный 29 сентября 1947 г., показал, что из 60 высаженных листовых черенков 50 укоренились, а 10 сгнили. Из числа 50 укоренившихся черенков 5 только укоренились, у 10 образовались почки у основания листьев, у 14 образовались побеги, не достигшие еще поверхности земли, и у 21 образовались зеленые побеги выше поверхности земли.

